ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

№ 4/07.4/10098

«10» «08» 2021 թ.

Ինֆորմացիայի ազատության
կենտրոնի նախագահ Շ. Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 2021թ. օգոստոսի 3-ի N 347-84 գրության ներկայացնում եմ տեղեկատվություն 2022 թվականի հունվարի 1-ից առևտրի օբյեկտներում, առևտրի իրականացման վայրերում, շրջիկ առևտրի կետերի միջոցով, շրջածախ առևտրի միջոցով, ինչպես նաև բացօթյա առևտրի իրականացման դեպքում մանրածախ առևտուր իրականացնելիս թաղանթի մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային պարկերի և տոպրակների (բացառությամբ կշռափաթեթավորման համար օգտագործվող պարկերի և երկրորդային հումքից արտադրված պարկերի և տոպրակների) վաճառքի (իրացման) արգելքի ուժի մեջ մտնելու, դրա կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների, ինչպես նաև խախտման համար սահմանված պատասխանատվության մեխանիզմների վերաբերյալ տնտեսվարողներին և բնակիչներին պատշաճ իրազեկելու նպատակով կատարված աշխատանքների վերաբերյալ.

- շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքի և ֆեյսբուքյան էջի միջոցով պարբերաբար իրականացվում է վերոնշյալ իրավական կարգավորման վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը,
- Հանրային հեռուստաընկերության և մասնավոր հեռուստաընկերությունների, լրատվական գործակալությունների, զանգվածային լրատվության այլ միջոցներով իրականացվում է խնդրի վերաբերյալ հաղորդումների պատրաստում և հեռարձակում: Գործընթացը կրում է շարունակական բնույթ,
- տնտեսվարողներին իրազեկման գործընթացն իրականացվում է նաև հանդիպումների, քննարկումների (այդ թվում՝ առցանց) ընթացքում,
- տեղեկատվական նամակներ և համատեղ քննարկման առաջարկներ են ուղարկվել մանրածախ առևտուր իրականացնող և խոշոր կազմակերպություններին,
- շրջակա միջավայրի նախարարությունը նախաձեռնել է իրազեկման լայնածավալ գործընթաց, որի շրջանակներում ձեռք է բերվել նախնական պայմանավորվածություն Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/GIZ)՝ տեղեկատվական պաստառների մշակման և տպագրության համար աջակցության տրամադրման հարցում: Տարածքային կառավարման ոլորտի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
0010, ք.Երևան, Հանրապետության հր., Կառավարական տուն 3
g.gabrielyan@env.am | www.env.am
հեռ. +374 11 818 518 | ֆաքս՝ +374 11 818 506

լիազոր մարմնի կողմից տրամադրվել է տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության մարզերում սոցիալական գովազդի համար նախատեսված վահանակների, ինչպես նաև համայնքների կողմից աջակցություն տրամադրելու պատրաստակամության վերաբերյալ:

8/9/2021

X

ԱՆՆԱ ՄԱԶՄԱՆՅԱՆ

Signed by: MAZMANYAN ANNA 5308800774

Հարգանքով՝

/Գ. Գաբրիելյան

Հասարակայնության հետ կապերի բաժին
Տ. Սմբատյան
011-818-559